

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

JOURNAL
OF
ARABIC STUDIES

№ 10

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
YEREVAN YSU PRESS

2018

*Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by the decision of the scientific council of
the Oriental Studies Department, Yerevan State University*

Խմբագրական խորհուրդ

Editorial Board

Դավիթ Հովհաննիսյան – բ.գ.թ.,
պրոֆեսոր (նախագահ)
Մարգարիտա Խաչիկյան
բ.գ.դ., պրոֆեսոր
Ռուբեն Կարապետյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Արշակ Փոլադյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Գուրամ Չիկովանի
բ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)
Սամվել Կարաբեկյան
բ.գ.թ., դոցենտ
Մուշեղ Ասատրյան
PhD (Կանադա)
Սոնա Տոնիկյան
բ.գ.թ., դոցենտ
Մարատ Յավրումյան
բ.գ.թ., դոցենտ
Հայկ Քոչարյան
պ.գ.թ., դոցենտ
Արայիկ Հարությունյան
պ.գ.թ.

Prof. David Hovhannisyanyan
(editor in chief)
Prof. Margarita Khachkanyan
Prof. Ruben Karapetyan
Prof. Arshak Poladyan
Prof. Guram Chikovani
(Georgia)
Dr. Samvel Karabekyan
Mushegh Asatryan, PhD
(Canada)
Dr. Sona Tonikyan
Dr. Marat Yavrumyan
Dr. Hayk Kocharyan
Dr. Arayik Harutyunyan

© Երևանի պետական համալսարան, 2018

© Yerevan State University, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վարդան Ղափլանյան

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆ ԱԲԽԱԶԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1992
-1993 ԹԹ. ՎՐԱՅ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....9-22

Գայանե Մկրտումյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԵՎԱՃՈՒՄԸ ՕՄԱՐ ԻԲՆ ԱԼ-ԽԱՏՏԱԲ (634-644)
ԽԱԼԻՖԱՅԻ ՕՐՈՔ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՎ ՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....23-32

Արամայիս Գրիգորյան, Վարդան Ղափլանյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՈՒԹՅԱՆ» ԴՈԿՏՐԻՆԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....33-46

Արշակ Գևորգյան

1950-1960 ԹԹ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽՈՂ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՔԹԱՇԻ ՍՈՒՖԻԱԿԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....47-60

Աբու Ջափղ Ալի Մուսա

«ՊԱՂԵՍԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ»
(«ՖԱԹՀ») ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ.....61-75

Լուսինե Մկրտչյան

ԻՍՐԱՅԵԼԻ «ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ.....76-85

Գազիկ Համբարյան

ԿԱՏԱՐՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԱՀԵՐԸ..... 86-95

Դավիթ Հովհաննիսյան, Արու Զաիր Այի Մուսա

ԻՍՐԱՅԵԼԱԲՆԱԿ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԱՐԱԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ

ՊԱՌԱԿՏՄԱՆ ԵՎ ԴԻՍ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 96-113

Վահե Աղասարյան

ԹՈՒՐԲԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ..... 114-120

ԻՍԼԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աննա Գևորգյան

ՄԵԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՏԱՐԲԵՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ.

ԱԼԻ ԽԱՄԵՆԵԻԻ ԵՎ ՀԱՄԱՆ ՌՈՒՀԱՆԻԻ ՈՐՈՇ

ՏԱՐԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 121-134

Շուշան Կյուրեղյան

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԻՔՆ ԱԼ-ՋԱՌԻՉԻ

«ԹԱԼԲԻՍ ԻԲԼԻՍ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ..... 135-162

Տաթևիկ Մկրտչյան

ՆԱԿՆՆԱԼ-ԲԱԼՆԱԳ-Ի ՈՒՂԵՐՁ-ՆԱՄԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ..... 163-176

Լևոն Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՉԿԻԹՆԵՐԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)..... 177-200

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Հովհաննիսյան

«ԱՐԱԲԸ» ՈՐՊԵՍ ԻՆՖՈՐՄԱՅԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ

ԱՂԱՊՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ..... 201-213

Լուսինե Տեր-Հովհաննիսյան

ԲԱՆՏԱՅԻՆ ԵՐԿԻ ԺԱՆՐՆ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. «ՀԱՐՄԻԵ».....214-222

Ամայյա Գրիգորյան

ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....223-234

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Երիցյան

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՃԳՆԱԺԱՍԸ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....235-255

Զարուհի Խաչատրյան

ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ՁԻԱՆՈՒՆՆԵՐ ԸՍՏ

ՊԱՐՄԿԵՐԵՆ «DO FARASNĀME. MANSUR O MANZUM»

ՁԻԱՄԱՏՅԱՆԻ.....256-270

Մերվաթ Գոմասա Աբդուլլահ Օսման

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....271-283

CONTENT

HISTORY

Vardan Ghaplanyan

THE FORMATION AND ACTIVITY OF THE MUSLIM ABKHAZIAN
COMMUNITY OF TURKEY DURING 1992-1993 GEORGIAN-
ABKHAZIAN WAR.....9-22

G.ayane Mkrtumyan

THE CONQUEST OF EGYPT DURING THE REIGN OF KHALIFA
OMAR IBN AL-KHATTAB IN CHRISTIAN AND MUSLIM
HISTORIOGRAPHY (634-644).....23-32

Aramayis Grigoryan, Vardan Ghaplanyan

THE IMPLEMENTATION OF TURKEY'S "STRATEGIC DEPTH"
DOCTRINE IN THE CONTEXT OF CONFLICT RESOLUTION
IN THE MIDDLE EAST AND SOUTH CAUCASUS.....33-46

Arshak Gevorgyan

REFLECTIONS AROUND THE INTERRELATIONS BETWEEN
THE TURKEY'S RULING (1950-1960) DEMOCRATIC PARTY
AND THE BEKTASHI SUFI ORDER.....47-60

Abu Zayd Ali Musa

THE FORMATION AND DEVELOPMENT OF "PALESTINIAN
NATIONAL LIBERAL MOVEMENT" (FATAH).....61-75

Lusine Mkrtchyan

LEGAL ASPECTS OF THE LAW OF RETURN.....76-85

Gagik Hambaryan

QATAR CRISIS AND MIDDLE EAST
INTERESTS OF THE USA.....86-95

Davit Hovhannisyan, Abu Zayd Ali Musa

ISRAELI PALESTINIAN ARAB POLITICAL LEADERS'
POSITION ON PALESTINIAN SPLIT AND IT'S REASONS.....96-113

Vahe Aghasaryan

THE POLITICS OF TURKEY IN SYRIA AND
THE KURDISH FACTOR.....114-120

ISLAMIC STUDIES

Anna Gevorgyan

ONE REVOLUTION, DIFFERENT REVOLUTIONARIES: SOME
TENSIONS BETWEEN THE PRESIDENT
ROUHANI AND AYATOLLAH KHAMENEI.....121-134

Shoushan Kyureghyan

THE INNOVATION AND THE INNOVATORS ACCORDING
TO 'IBN AL-JAWZĪ'S "TALBĪS IBLĪS".....135-162

Tatevik Mkrtchyan

DISCUSSION OF SOME STRUCTURAL AND CONTEXTUAL
PECULIARITIES OF 'ALI IBN ABĪ TĀLIB'S LETTERS
IN NAHĠ AL-BALĀĠA.....163-176

Levon Petrosyan

THE MOSQUES OF YEREVAN (HISTORICAL APPROACH).....177-200

LITIRATURE

Davit Hovhannisyan

"ADAB" AS THE ADAPTATION INSTRUMENT FOR
THE INFORMATION FLOW.....201-213

Lusine Ter-Hovhannisyan

THE "HABSIYAT" GENRE IN
PERSIAN LITERATURE.....214-222

Amalya Grigoryan

THE HEBREW TEXT AND THE ARMENIAN

TRANSLATIONS OF THE SONG OF SONGS223-234

LINGUISTICS

Hasmik Yeritsyan

CRISIS OF ARABIC LANGUAGE IN

THE UNITED ARAB EMIRATES235-255

Zaruhi Khachatryan

SOME ARABIC ORIGIN HORSE APPELLATIONS

ACCORDING TO PERSIAN LANGUAGE HORSE BOOK

«DO FARASNĀME. MANSUR O MANZUM»256-270

Mervat Gomaa Abdullah Osman

THE GREEK LOANWORDS MUTUAL IN

ARABIC AND ARMENIAN271-283

NAHĠ AL-BALĀĠA-Ի ՈՒՂԵՐՁ-ՆԱՍՄԱԿՆԵՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Տաթևիկ Մկրտչյան
tmkrtchyan@ysu.am

Բանալի բառեր. Նահջ ալ-բալադա, իմամ Ալի իբն Աբի Տալիբ, շիականություն, թառասուլ, ուղերձ-նամակ, Մուսավիա:

Nahġ al-balāġa (այսուհետ՝ Նահջ ալ-բալադա)¹ (արաբերենից nahġ (նահջ)) թարգմանաբար նշանակում է 1. ուղի, ճանապարհ, 2. մեթոդ, միջոց, 3. արվեստ, իսկ balāġā (բալադա՝ հոետորություն, ճարտասանություն) ուղղահավաստ չորրորդ խալիֆ և շիական առաջին իմամ Ալի իբն Աբի Տալիբի (մահ 661 թ.) խուտբաների՝ (241 քարոզ, ճառ, հրահանգներ), ուղերձ-նամակների (79) և ասույթների ու իմաստուն խոսքերի (480) մի ընտրանի ժողովածու է²: Նահջ ալ-բալադա ժողովածուն կարևոր դեր և նշանակություն ունի մուսուլմանական ավանդույթի և հատկապես շիաների համար: Շիական կրոնափիլիսոփայական դավանաբանության հիմքում ընկած է այն միտքը, որ իմամների խոսքերը և իմամությունը՝ որպես

¹ Մեր ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք Նահջ ալ-բալադայի հետևյալ հրատարակությունից (այսուհետ՝ Նահջ ալ-բալադա)

نهج البلاغة من كلام أمير المؤمنين أبي الحسن علي بن أبي طالب عليه السلام/ هو ما اختاره الشريف الرضي. قم: أنصاريان، 2004، ص. 653.

² Հավաքագրման մասին մանրամասն տեղեկություններ է պարունակում հենց Ալ-Ալ-Շարիֆ ալ-Ռադիի կողմից գրված Նահջ ալ-բալադայի նախաբանը, որում նա պատմում է, որ նկատել է, որ Ալի իբն Աբի Տալիբի խոսքերը երեք հիմքով էին՝ նախ, الخطب و الاوامر (քարոզներ և ճառեր), երկրորդ, (الرسائل و المكتوبات) ուղերձներ և նամակներ), և երրորդ, و الحكم المواعظ (իմաստուն խոսքեր, ասույթ-իմաստություններ), հենց այդ երեքն էլ ալ-Շարիֆ ալ-Ռադին ներառում է առանձին գլուխների մեջ: St' u' Sharif al-Radi, Mukaddima, Nahġ al-balāġā, pp 8-9.

Մուհամմադ մարգարեի միջոցով Ալլահից ստացված ուղերձներից՝ Ղուրանից՝ Ալլահի ուղղորդած ճանապարհից հետո երկրորդ «հեղինակավոր խոսքը և ճանապարհն է»: Ինչպես նշում է Լիյաքաթ Թաքիմը՝ «Մուհամմադ մարգարեի արժանիքները տեսանելի են Ալլի մեջ որպես հայելային պատկեր»³:

Ալլի իբն Աբի Տալիբին պատկանող նյութը բանավոր երկարատև փուլ է անցել և ժողովրդական բանահյուսության մեջ հետագա մշակումների ընթացքում, որոշակի հավելումների և փոփոխությունների ենթարկվելով, հաստատաբար գրավոր տեքստի վերածվելով՝⁴ արդեն այդ ձևով է հասել 10-րդ դար՝ Նահջ ալ-բալադայի կազմող-հեղինակ միջնադարյան հայտնի գրականագետ, բաղդադյան միջավայրի հայտնի բանաստեղծ և շիա գրող ալ-Շարիֆ ալ-Ռադիին (970-1015/16): Ալ-Շարիֆ ալ-Ռադիին Նահջ ալ-բալադայի նախաբանում նշում է, որ «ճարտասանության և հոետորության չափանիշներից ելնելով՝ ընտրության արդյունքում հավաքագրել է (1009/1010թ.) մեկ ամբողջական գրավոր հուշարձանում Ալլի իբն Աբի Տալիբին պատկանող նյութից լավագույնները»⁵: Ընդհանրապես Նահջ ալ-բալադայի երեք բաժիններն էլ՝ ուղերձ-քարոզները, ուղերձ-

³ Liyakat Takim, Spirituality in the Nahj al-Balagha, available at:

<http://www.ltakim.com/Nahj%20al-Balagha.pdf>, (մուտք՝ 10.11.2018)

⁴ Նահջ ալ-բալադայի աղբյուրագիտական ուսումնասիրության կարևոր աշխատություններից են՝ Abd al-Zahrā' Husaynī al-Khaīb, *Masādir Nahj al-Balāghah wa Asāniduh*, (Beirut, 1975), Kāshif al-Ghitā *Madārik Nahj al-Balāghah wa da' al-shabāhat 'anhu*, `Abd Allah Ni'mah *Masādir Nahj al-Balāghah* (Բեյրութ, 1972) և այլ բազմաթիվ բազմահատոր մեկնաբանություններ, որոնց թիվը մի քանի տասնյակից անցնում է:

⁵ Նախաբանի վերլուծությունը տե՛ս՝ Մկրտչյան, Ս., ՆԱԿԸ AL-BALĀĠA-Ի հավաքագրման, վերնագրման, բովանդակության ընտրության և կառուցվածքային որոշ հարցերի պարզաբանումը՝ ըստ հավաքագրող-հեղինակ Ալ-Շարիֆ ալ-Ռադիի նախաբանի, Արևելագիտության հարցեր, հատոր 11, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ. 50-65:

նամակները և իմաստուն խոսքերն ու ասույթները, իսլամական հռետորական բանավոր ավանդույթի կարևորագույն նմուշներ են, որոնք հետագայում մշակումների արդյունքում գրավոր ավանդույթում վեր են ածվում առանձին ժանրերի: Ուղերձ-նամակները արաբամուսուլմանական գրավոր մշակույթում արդեն համարվում են «թառասուլ» ժանրի նմուշներ: Մուսուլման հռետորները և գիտնականները հաճախ էին դիմում Ալիի՝ արաբական բնության վերաբերյալ մետաֆորներին և հաճախակի օգտագործում էին Ալիի խոսքերը: Դրա վառ օրինակ է համարվում ութերորդ դարի *քաթիբ* (քարտուղար, գրականագետ) արաբամուսուլմանական մշակույթում «թառասուլ» ժանրի հիմնադիր համարվող Աբդ ալ-Համիդ ալ-Յահյա ալ-Քաթիբը (մահ. 750) ⁶, որի հիմնական ստեղծագործություններից են խալիֆ Մարվանի անունից որդուն հասցեագրված ուղերձներն ու նամակները: Ըստ Տահերա Քութբուդդինի՝ նա նույնպես դիմել է Ալի իբն Աբի Տալիբի կողմից կիրառված բնության վերաբերյալ մետաֆորներին և հաճախակի է օգտագործել Ալիի խոսքերը ⁷: Չնայած այն հանգամանքին, որ վերջինը եղել է հակաալիական Օմայանների պաշտոնական դիվանի գովերգուն «Արաբական արձակի հայր» համարվող ալ-Քաթիբին հարցնում են՝ «Ի՞նչն է հնարավորություն տվել հռետորության արվեստը յուրացնել, ինչպե՞ս էք սովորել», նա պատասխանել է՝ «Անգիր անելով Ալիի

⁶ Թառասուլ ժանրի ձևավորման և դրա հիմնադիր ալ-Քաթիբի մասին մանրասերը տե՛ս՝ Фильштинский И.М. История арабской литературы, М., Главная редакция научной литературы, 1985, с. 255-261.

⁷ Այս մասին տե՛ս՝ Tahera Q., The sermons of Ali ibn Abi Talib: At the confluence of the core Islamic teachings of the Quran and the Oral, Nature-Based cultural ethos of Seventh Century Arabia. Anuario De Estudios Medievales, 42/1, enero-junio 2012, p. pp. 201-228. http://nelc.uchicago.edu/sites/nelc.uchicago.edu/files/Qtubuddin_201-228.pdf (մուտք 15.09.2018):

խոսքերը»⁸: Նահջ ալ-բալադայի կարևորագույն մեկնաբանության հեղինակ Իբն Աբի ալ-Հադիդի (մահ. 1258թ.) մոտ հիշատակվում է Աբդ ալ-Համիդ ալ-Յահյա ալ-Քաթիբի հետևյալ միտքը. «Ես անգիր եմ արել Ալիի 70 քարոզ, սակայն դրանք դեռ կան ու կան»⁹:

Ալի իբն Աբի Տալիբին պատկանող ուղերձ-նամակները (rasa'il) ժամանակագրորեն շատ ավելի վաղ շրջանի են պատկանում, քան «թառասուլ» ժանրի առաջին նմուշներ համարվող ալ-Քաթիբի ուղերձներն ու նամակներն են: Բայց իրենց հավաքագրման տեսանկյունից դրանք շատ ավելի ուշ շրջանի են պատկանում: Այստեղ կրկին անգամ հարցադրումներ են առաջանում դրանց հեղինակային, բովանդակության և ձևի, տեքստային իմաստների և ուղերձների հավաստիության առնչությամբ¹⁰:

Հոդվածում ներկայացվելու է Ալիի ուղերձ-նամակների կառուցվածքային օրինաչափությունները, ժամանակային և տարածական առանձնահատկությունները, տեքստի/ուղերձի տեսանկյունից «հասցեատերերի» պարզաբանումը, ինչպես նաև առաջին 10 ուղերձ-նամակների բովանդակային ամփոփ ներկայացումը:

Ընդհանրապես, Նահջ ալ-բալադայի ուղերձները Իմամ Ալիի «խոսքեր»/խոսույթ/մտքեր լինելուց բացի, պատմական կարևոր տեղեկատվության աղբյուր կարելի է դիտարկել: Փորձենք հասկանալ, թե ինչ տեղեկություն է այն իր մեջ պարունակում. նախ

⁸ Al-Jahshiyari (d. 942), Kitab al-Wuzara' wa-l-kuttab, ed. Mustafa al-Saqqa, Ibrahim al-Ibyari, and 'Abd al-Hafiz Shalabi, Cairo, Mustafa al-Babi al-Halabi, 1980.

⁹ Ibn Abi al-Hadid, Sharh Nahj al-Balāgha, vol 1, Cairo (1959-1964), p 24.

¹⁰ «Հեղինակային» խնդրի և հավաստիության հարցի մասին առավել մանրամասն տես՝ Մկրտչյան, Տ., NAHG al-BALĀGĀ-ի «հեղինակային» խնդրի քննարկումը միջնադարյան սուննի գիտնականների շրջանում, Արաբագիտական ուսումնասիրություններ, Հատոր 7, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ. 160-182:

տվյալ ժամանակաշրջանի այս կամ այն իրադարձության մասին, ինչպես նաև այն մարդկանց մասին, որոնք եղել են այս կամ այն քաղաքի/երկրամասի կառավարիչ որևէ իրադարձության ժամանակ: Ալ-Շարիֆ ալ-Ռադիին փորձել է շատ չմիջամտելով տեքստին՝ նրբորեն այս ամենը հասցնել ընթերցողին, մեկ կամ երկու արտահայտությամբ անհրաժեշտ մանրամասներ հաղորդելու արդյունքում:

Ուսումնասիրել ենք նամակների կառուցվածքը ելնելով մի քանի չափանիշներից՝ վերնագիր, նամակների սկիզբ հանդիսացող ձևեր և արտահայտություններ, ուղերձ-նամակների հասցեատեր/եր, ուղերձ-նամակների որպես հաղորդակցական ակտի երանգային միտվածություն:

• Վերնագիր

Կառուցվածքային տեսանկյունից ժողովածուի մեջ կարևոր դեր է խաղում ուղերձների վերնագրումը: Օրինաչափ են վերնագրերը, որոնք հստակ մատնանշում են հասցեատիրոջը՝ կամ որևէ կոնկրետ մեկին կամ մարդկանց որևէ խմբին, առիթը, պատրվակը, պատմական իրադարձությունը, որոնք կարծես ոչ ուղղակիորեն կրկին իրենց մեջ ներառում են հասցեատիրոջ հավանական շրջանակը: Ստորև թարգմանաբար ներկայացնում ենք 1-10 ուղերձների վերնագրերը¹¹:

1. Քուֆայի բնակչությանը, Մադինայից Բասրա տեղափոխման ժամանակ
2. Նրանց (Քուֆայի մարդկանց-S.U.), Բասրայի հաղթանակից հետո
3. Շարիհ բըն ալ-Հարիսին, Քուֆայի դատավորին

¹¹ Թարգմանությունները կատարվել են «Նահջ ալ-Բալադայի» հետևյալ հրատարակությունից, *ayumlehun*՝ Նահջ ալ-Բալադա՝

نهج البلاغة من كلام أمير المؤمنين أبي الحسن علي بن أبي طالب عليه السلام/ هو ما اختاره الشريف الرضي. قم: أنصاريان، 2004.

4. Իր գորքի որոշ հրամանատարներին
5. Աշաբ բըն Կայսին Ատրպատականի կառավարչին
6. Մուավիային
7. Նորից նրան (Մուավիային- Տ.Մ.)
8. Ջարիր բըն Աբդ Ալլահ ալ-Բաջալիին, երբ նա ուղարկվեց Մուավիայի մոտ
9. Մուավիային
10. Նորից նրան (Մուավիային-Տ.Մ.)

• Ուղերձ-նամակները սկզբնավորող խոսքեր

Ուղերձ-նամակներում սկզբնավորող խոսքային արտահայտությունները յոթն են, որոնցից մեկն անպայմանորեն առկա է ուղերձ-նամակի վերնագրում: Դրանք են՝ *min kitāb lahu* - նրա նամակից (ամենից շատ հանդիպող ձևն է՝ 63 ուղերձում), *min waṣīyyah lahu* - *waṣīyyah* թարգմանաբար նշանակում է կտակ, ցուցում, հրաման (10-11,12,14,24,25,31,47,56,76,77 ուղերձներում), *min duā' lahu* - *duā'* թարգմանաբար նշանակում է կոչ, խնդրանք (15-րդ ուղերձում), *wa kāna yaqulu* - *ինչպես ասել է նա* (16-րդ ուղերձում), *min 'hd lahu* - *կտակ-կանոնակարգ* (26,27 ուղերձներում), *min kalām lahu* - *նրա խոսքերից* (23-րդ ուղերձում), *min half lahu* - *half* -երդում (74-րդ ուղերձում): Ի դեպ առաջին տաս ուղերձ-նամակները, որոնց վերնագրերը ներկայացվել է ստորև, սկսվում են *min kitāb lahu* արտահայտությամբ:

• Ուղերձ-նամակների հասցեատեր/եր

Ռ. Յակոբսոնը «խոսքային գործողության» գործառույթների մեջ առանձնացնում է կոմունիկատիվ, կոչական, պոետիկ, արտահայտչական/էքսպոետիվ, ֆատիկ և մետալեզվական գործառույթները: Բացի այդ նա նշում է, որ կոմունիկատիվ մակարդակում տեքստի ուսումնասիրման առաջնային

մակարդակն է հեղինակ-ընթերցող կապը ¹² : Այս կապի առանձնահատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել հեղինակի կողմից օգտագործվող ինֆորմացիայի փոխանցման մեխանիզմները, դրանց առանձնահատկություններից բխող՝ տեքստում արձանագրված նպատակներն ու հեղինակի կողմից ակնկալվող արդյունքները: Այդ տեսանկյունից առանձին ուշադրության են արժանի այն տեքստերը, որոնք իրենց կառուցվածքով բացահայտորեն առանձնացնում են հեղինակին և ընթերցողին:

Փաստորեն ուղերձը, որպես տեքստի տեսակ՝ առանձնանում է նախ և առաջ հեղինակ-ընթերցող կամ հասցեագրող (addresser) և հասցեատեր (addressee) կապի որոշակիությամբ: Ուղերձները կարելի է բաժանել երեք խմբի ըստ հասցեատիրոջ տեսակի: Դրանցից առաջինը կարելի է անվանել «անձնական ուղերձ» քանի որ այն ուղղված է հստակ սահմանված հասցեատիրոջ և մնացած ընթերցողները հանդիսանում են երրորդ կողմ: Այս դեպքում շատ կարևոր են անձնավորված լինելու և ժամանակային/իրադարձության գործոնները՝ առաջինը որովհետև ուղերձը ի սկզբանե նախատեսված է միայն հստակ սահմանված հասցեատիրոջը, իսկ երկրորդը, որովհետև այն հասանելի է դառնում այլ, այս պարագայում կողմնակի հասցեատերերին միայն որոշ ժամանակ անց:

Երկրորդ խմբում թեև առկա է հստակ սահմանված հասցեատեր, այնուամենայնիվ նրա առկայությունն օգտագործվում է որպես առիթ կամ պատրվակ, որի միջոցով այլ ընթերցողը դառնում է հասցեատեր:

Ինչ վերաբերում է երրորդ տեսակին, ապա այն կարելի է բնորոշել որպես բացահայտ հասցեատեր չունեցող, սակայն, թե՛

¹² Якобсон, Р., Лингвистика и поэтика, // Структурализм: «за» и «против», М. 1975. Available at: <http://philologos.narod.ru/classics/jakobson-lp.htm> (12.09.2018).

բովանդակային, թե՛ կառուցվածքային առումով չափանիշների ամբողջություն պարունակող տեքստ, որը որոշակիորեն սահմանում է պոտենցիալ հասցեատիրոջը և առանձնացնում «ակտիվ հասցեատերերին» «պասիվ հասցեատերերի» խմբից:

Այժմ քննենք հենց Նահջ ալ-բալադայի ուղերձները վերոնշյալ չափանիշներից ելնելով: Հետաքրքիր է, որ յուրաքանչյուր ուղերձ ունի իր անմիջական հասցեատերը, ժամանակային և տարածական սահմանափակումները, հաճախ իրադարձությամբ պայմանավորված: Առաջին տեսակին են պատկանում կոնկրետ մեկին հասցեագրված նամակներն ու ուղերձները: Սրանց մեջ կարելի է առանձնացնել այն ուղերձները, որոնք բացի անհատի հասցեագրումից պարունակում են նաև տարածական (օրինակ որևէ նահանգի դատավորին կամ կառավարչին ուղղված), ժամանակային և իրադրության մանրամասներ (օրինակ Բասրայի նվաճումից հետո և այլն) և հետապնդում են բարոյախրատական նպատակներ կամ մուսուլմանին ճիշտ ճանապարհով ուղղորդելու տեսանկյունից ցուցումներ են ներառում: Այս խմբի երրորդ տեսակն էլ կրկին ուղղված է որևէ անձի, սակայն այն պատասխան է հանդիսանում, հենց եղպես էլ նշելով՝ *ջաուարան-ի պատասխան/պատասխանելով*:

Հաջորդ խումբը ուղերձ-նամակների ուղղված է մարդկանց հավաքական խմբի՝ զորքերի առաջնորդներին, որևէ քաղաքի կամ երկրամասի բնակիչներին՝ որպես կանոն լինում է Ահլ ալ-Քուֆայի՝ այսինքն Քուֆայի բնակիչներին կամ զորքի որոշ առաջնորդներին/հրամանատարներին, որոնցում նույնպես կարելի է առանձնացել նաև պատմական այս կամ այն իրադարձության հետ առնչությունը:

- Ուղերձ-նամակների որպես հաղորդակցական ակտի երանգային միտվածություն

Ուղերձները նպատակ են հետապնդում ընթերցողին ուղղորդել, ներկայացվող տեղեկատվության նկատմամբ էմոցիոնալ

վերաբերմունք ձևավորել և ընթերցողին տեքստում շարադրող նյութին մասնակից դարձնել: Ուղերձ-նամակներն ունենում են երանգային միտվածություն՝

- Հուզական տեսանկյունից՝ դրական-բացասական
- Ուշադրության ուժգնության տեսանկյունից՝ առաջնային-երկրորդական
- Ընթերցողի արձագանքման տեսանկյունից՝ ակտիվ-պասիվ:

Նաև ալ-բալադան արտահայտում է Իմամ Ալիի՝ աշխարհընկալումները, նրա կողմից ընկալվող և սահմանված արժեհամակարգը, որն էլ բնութագրում է իր՝ որպես չորրորդ ուղղահավաստ իսլաիֆի և մուսուլմանական համայնքի համար տվյալ ժամանակահատվածում կարևոր հարցերի և պատմական իրողությունների նկատմամբ նրանց վերաբերմունքն ու մոտեցումները, ինչն էլ փաստորեն շիականության գաղափարախոսական և դավանաբանական հիմնասյունն է դառնում:

Նպատակը քարոզչական միջոցներով իր գաղափարները հասանելի դարձնելն էր, որոնք էլ հետագա փոխանցման և տարածման միջոցով մուսուլմանական համայնքն առավել ամուր և պաշտպանված կդարձնեին: Կարելի է ենթադրել, որ այս ամենը նաև համայնքի հետևորդներին ճիշտ ճանապարհը ցույց տալու և համալրելու նպատակներ էին հետապնդում, և որ հեղինակ-ընթերցող կապը հանդիսանում է նշված նպատակների տեքստաբանական արտահայտման կարևորագույն մեխանիզմներից մեկը:

Նաև ալ-բալադայի ուղերձ-նամակների բովանդակությունը պատմական, կրոնաքաղաքական, դավանաբանական և տվյալ ժամանակաշրջանի բարոյահոգեբանական միջավայրի և հատկապես շիական ավանդույթի վերհանման կարևոր աղբյուր է հանդիսանում: Դրանք լույս են սփռում տվյալ ժամանակաշրջանի

պատմական իրադարձությունների վրա և շիական պատմական ավանդույթի համար հիմք են հանդիսանում: Այս հողվածում կներկայացվի բովանդակային որոշ նկատառումներ առաջին տասնամակների համատեքստում:

Ուղերձ-նամակ 1¹³. Այս նամակում Ալին մեղադրում է Տալիային և Զուբեյրին, ինչպես նաև Աիշային Օսմանի սպանության մեջ ներգրավված լինելու հարցում:

Ուղերձ-նամակ 2¹⁴. Սա հերթական հաղթանակներից հետո արված հայտարարություններից մեկն էր, որում ուղղակի գովերգվում էր տեղի ունեցածը՝ այն համարելով Ալլահի ճանապարհին հետևել՝ իրեն՝ Ալիին լսելու ուղիով:

Ուղերձ-նամակ 3¹⁵. Քուֆայի դատավորին ուղղված խոսք է, և նրա կողմից գնված մի տան օրինակով ցույց է տալիս նման արարքի սխալականությունը Աստծո առաջ և վեր է հանում Ալլահի ճանապարհից շեղված լինելու հանգամանքներ:

Ուղերձ-նամակ 4¹⁶. Այս նամակն ուղղված է Բասրայի կառավարչին, երբ վերջինս տեղեկացնում է, որ Բասրայում են Տալիան և Զուբեյրը: Ալին խորհուրդ է տալիս, որպեսզի Բասրայի կառավարիչը իրեն շրջապատի միայն ու միայն հավատարիմներով, քանի որ, ոչ ամբողջ սրտով հավատարիմները հաստատապես կլքեն նրան կես ճանապարհից:

Ուղերձ-նամակ 5¹⁷. Ալին հասցեագրում է այս ուղերձը Ատրպատականի կառավարչին, որը կասկածներ է ունեցել նահանգի ունեցվածքը Ալիին ուղարկելու հարցում և այդ համատեքստում նույնիսկ մտածել է Մուավիային ապավինել և աջակցել:

¹³ Նահջ ալ-բալադա, էջ. 423:

¹⁴ Նույն տեղում՝ էջ. 424:

¹⁵ Նույն տեղում՝ էջ. 424-425:

¹⁶ Նահջ ալ-բալադա, էջ. 426:

¹⁷ Նույն տեղում՝ էջ. 426:

Ուղերձ-նամակ 6¹⁸. Մուավիային ուղղված առաջին ուղերձն է Նահջ ալ-բալադայում: Այս նամակում, Ալին փորձում է հիմնավորել իր խալիֆ դառնալու օրինականությունը ինչպես եղել է Աբու Բաքրի, Օմարի և Օսմանի խալիֆ դառնալու օրինակներով, և որ ոչ ոք նույնիսկ ներկա չեղողները կասկածի տակ չեն կարող առնել դրա օրինականությունը:

Ուղերձ-նամակ 7¹⁹. Պատասխան Մուավիայի ուղերձ-նամակին, որում ասվում է, որ վերջինն ուղղակի մոլորության մեջ է, չունի այդքան իմաստություն և իր այդ առաջարկներով, նոր խալիֆի ընտրության համար, սխալ ճանապարհի վրա է և քննադատելով իսլամը՝ գտնվում է մոլորության մեջ:

Ուղերձ-նամակ 8 ²⁰ . Մա Մուավիայի մոտ ուղարկված իր ներկայացուցչին է հասեագրված, որտեղ նա առաջարկում է ճշտել, արդյոք Մուավիան ընտրել է պատերազմելու ճանապարհը, թե խաղաղության և ենթակայության, և եթե առաջինը, թող թողնի նրան և վերադառնա, իսկ եթե երկրորդը, ապա թող ստանա նրա հավատարմությունը:

Ուղերձ-նամակ 9 ²¹ . Մուավիային հասցեագրված այս նամակում Ալին խոսում է այն մասին, թե ինչպես էր իր ժողովուրդը՝ (ի նկատի ունենալով Ղուրեյշ ցեղը) ցանկանում սպանել Մարգարեին և վերջ տալ իրենց արմատներին, ինչպիսի հետապնդումների էին ենթարկում, ապրելու համար ստեղծում ամենածանր պայմանները՝ ստիպելով փախուստի դիմել: *...Այդ ժամանակ Ալլահը մեզ տվեց հաստատականություն պաշտպանելու Իր կրոնը և Իր պատիվը:*

Հետո նա նշում է, որ այն բոլոր մարդիկ, ովքեր հետևեցին Մարգարեին պաշտպանված էին և Մարգարեն թույլ չէր տալիս

¹⁸ Նույն տեղում՝ էջ. 427:

¹⁹ Նույն տեղում՝ էջ. 428:

²⁰ Նույն տեղում՝, էջ. 428-429:

²¹ Նույն տեղում՝ էջ. 429-430:

հավատացյալներին սպանվել՝ ուղարկելով իր առաջնորդներին, որոնք էլ իրենց մահով փրկում էին մյուսներին: Ալին այս հատվածում իրեն էլ է համարում այդ առաջնորդներից, որը բազում անգամներ պետք է հարվածը վերցնեք և գոհվեք, սակայն փրկվել է, և հիմա զարմանում է, թե ինչպես կարող է Մուավիան այս ամենը հաշվի չառնել և փորձել համեմատվել իր հետ և հավակնել մի բանի, որը ոչ միայն ինքը՝ Ալին չի հասկանում, այլև Ալլահը նույնպես չգիտի: Վերջին հատվածում նշում է. *...Ինչ վերաբերում է քո խնդրանքին Օսմանին սպանողներին հանձնել քեզ, ես շատ եմ մտածել այդ մասին, և ինձ համար անընդունելի է նրանց քեզ կամ մեկ ուրիշին հանձնելը:*

Հետո նա խորհուրդ է տալիս փոխել իր սխալ ճանապարհը և արարքները, քանի որ հակառակ դեպքում նրանք իրեն կհանդիպեն և կգտնեն ամենուր...

Ուղերձ-նամակ 10²². Այս նամակում Ալին Մուավիային մեղադրում է միայն երկրային կյանքով և հաճույքներով ապրելու մեջ և հորդորում է հիշել Ահեդ դատաստանի օրվա մասին, երբ ամեն բան առանց քողի կլինի և նրան ոչինչ այլևս չի պաշտպանի: Նա խորհուրդ է տալիս ցանկություններով չառաջնորդվել և այդժամ նա կտեսնի իր ներաշխարհի իրական պատկերը: *...Դու ինձ կանչում ես պատերազմի: Լավ կլինի մարդկանց հանգիստ թողնես և դեմ առ դեմ հանդիպենք...* Նա նշում է, որ ինքը՝ Հասանի հայրը, Բադրի ճակատամարտում սրով մասնատել էր Մուավիայի պապուն, եղբորը և քեռուն: *... Այդ նույն սուրը ինձ մոտ է և ես կդիմավորեմ իմ հակառակորդին այդ նույն սրով և նույն սրտով...*²³:

²² Նահջ ալ-բալադա, էջ. 431-432:

²³ Հայտնի է, որ Բադրի ճակատամարտում (624թ.) Ալի իբն Աբի Տալիբը աչքի է ընկնում իր մարտական ուժեղ պատրաստվածությամբ և, ըստ ավանդույթի այդտեղ սպանվածների կեսից ավելիին սպանել էր հենց ինքը:

79 ուղերձ-նամակներից 18-ը միայն Մուավիային ուղղված նամակներն են, այդ թվում նաև պատասխան նամակները: Դրանք են՝ 6, 7, 8, 9, 10, 17, 28, 30, 32, 37, 48, 49, 55, 64, 65, 70, 73, 75: Մուավիային ուղղված ուղերձների մեծաթվությունը ցույց է տալիս, թե ինչ կարևոր խնդիր է եղել Ալիի կողմից իր՝ որպես չորրորդ ուղղահավատ խալիֆ լինելու օրինականության պահպանման հարցը, բազմաթիվ այլ կարևոր խնդիրների և կառավարման դժվարությունների համագումարում: Այսինքն տվյալ ժամանակաշրջանի համար Մուավիայի կողմից խալիֆայության հավակնությունները մեծ սպառնալիք են եղել Ալիի համար: Մա շատ կարևոր ուղերձներ են, որոնք ցույց են տալիս Մուավիայի՝ խալիֆայության նկատմամբ հավակնությունները և այդ համատեքստում Ալիի դեմ արվող գործողությունները, իսկ դրանց պատասխաններն Ալիի կողմից հավաքագրված են Նահջ ալ-բալաղա ժողովածուում:

DISCUSSION OF SOME STRUCTURAL AND CONTEXTUAL PECULIARITIES OF ‘ALI IBN ABĪ TĀLIB’S LETTERS IN NAHĠ AL-BALĀĠA

Summary

Tatevik Mkrtychyan
tmkrtychyan@ysu.am

Keywords: *Nahğ al-Balāğa, ‘Ali ibn Abī Tālib, tarasul, Ithna‘ashariya, Muawiya, rasā’il.*

Nahğ al-Balāğa (lit. Way/Path/Peak of Eloquence) is a “collection of fragments of sermons and speeches, letters, homilies and maxims” attributed to the first Ithna‘ashari Imām and the fourth al-Ḥulaḡfā’ al-Rāšidūn, Amīr al-Mū’minīn, ‘Ali ibn Abī Tālib, (600-661) compiled by Al-Šarīf al-Raḡī (970-1015/1016) one of the prominent scholars and poets of the Būyid period (945-1055). In this article I examine and discuss some

structural and contextual peculiarities of ‘Ali ibn Abī Tālib’s letters in Nahǧ al-Balāǧa.

**ОБСУЖДЕНИЕ НЕКОТОРЫХ СТРУКТУРНЫХ И
КОНТЕКСТУАЛЬНЫХ ОСОБЕННОСТЕЙ ПИСЕМ АЛИ ИБН
АБИ ТАЛИБА В НАХДЖ АЛЬ-БАЛАГЕ**

Резюме

*Tatevik Mkrtchyan
tmkrtchyan@ysu.am*

Ключевые слова: *Нахдж аль-балага, Али ибн Аби Талиб, шиизм, тарассуль, Муавия.*

Нахдж аль-Балага (пер. Путь красноречия) является сборником, состоящим из 240 проповеди, 79 писем и 489 высказываний четвертого праведного халифа (656—661), повелителя правоверных (амир аль-муминин) и первого из двенадцати почитаемых шиитами имамов имама Али ибн Аби Талиба (600-661). Автором компиляции этого труда является шиитский ученый, известный литератор, поэт, богослов и филолог аль-Шариф аль-Ради (970-1015/1016). В этой статье мы рассмотрим вопросы, касающийся структуры и содержания писем Али ибн Аби Талиба.